

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԳՐԵԳԸ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՐԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ
ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ
ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՐԻՆ
ՈՐ Ի ՓԱՐԻՋ. ՖՐԱՆՍԱ**

Ողորմութեամբն Աստուծոյ, երգի ազնուագոյն արուեստը մեր ժողովուրդին շնորհուած պարգևներէն մէկն եղած է ի սկզբանէ, որ երբեմն իր շռայլ արտայայտութիւնը գտած է բացառիկ անձնատրութեանց կեանքին մէջ:

Այդ աստղաբոյլին մէջ առանձնայատուկ լոյսով կը փայլիք մահ Դուք արդէն կէս դար շարունակ՝ միջազգային չափանիշներով ու տարողութեամբ:

Ջանիցս Մենք ուրախութիւնն ունեցած ենք տեսնելու և զգալու, որ Դուք Ձեր փառքի զազաթնակետին անգամ մնացած էք որպէս ճշմարիտ հայ և հայրենասէր: Ձեր հայկական ոգին առանձնապէս պոռթկումի և շողարձակումի պահեր արձանագրեց մասնաւորապէս մեր ժողովուրդի և երկրի համար դժուարին տարիներին՝ 1988-ին Հայաստանի մէջ պատահած ահաւոր ու աղետալից երկրաշարժէն անմիջապէս յետոյ:

Դուք անմիջապէս շտապեցիք օգնութեան ձեռք մեկնել մեր հարուածուած ժողովուրդի զաւակներուն և Ձեր եռանդով ու խանդով, երգով ու գործով աշխարհի ուշադրութիւնն առաւել բևեռեցիք Հայաստանի վրայ: Եղաք Հայաստանի յատուկ դեսպանը և կը շարունակէք Ձեր աստուածահաճոյ գործը մեր հայրենիքի համար:

Ուստի Մենք կը գնահատենք Ձեր բազմաբեղուն ծառայութիւնները և այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ռ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ շքանշանը:

Ի խորոց սրտի կ'աղօթենք առ Բարձրեայն Աստուած, որ Չեզի պարզևե քաջառողջ և երկար կեանք, որպէսզի շարունակէք Չեր սպասն ընծայել ազգին և մարդկութեան՝ արդարօրէն վայելելով Չեր անճնուէր գոհութեանց բարիքները:

Ողջ լիւրութ ի Տէր, գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւետ օրինեալ ի Մենջ. Ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոմդակս ի 25 Մայիսի

Յամի Տեառն 1999 և ի քօլին Հայոց ՌՆԽԸ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

Ընդ համարաւ Է/236